


АНАИТ БЕКАРЯН, Армения в судьбе Джорджа Байрона, Ереван, изд. «Гитутюн» НАН РА, 2023, 198 с.



Աշխատությունը նվիրված է հայ իրականության հետ անգլիացի մեծ բանաստեղծ Ջ. Բայրոնի ունեցած աղերսներին և նրա ստեղծագործության տեղին ու նշանակությանը հայ մշակույթի պատմության մեջ: Մեզանում վաղաժամոր՝ մի թեմա, որ սակայն, Ա. Բեքարյանն ամբողջացրել է շատ ավելի լայն շառավղով՝ ընդհուպ մինչև Բայրոնի ստեղծագործությունների թարգմանություններն առանձին հրատարակություններով և պարբերական մամուլում, Բայրոնի հայկական նամակներն ու հայագիտական ուսումնասիրությունները, դրանց փոխառնչությունները Եվրոպայում հայագիտության զարգացման հետ, բայրոնիզմի դրսևորումները հայ գրականության մեջ և այլն: Թեմատիկ ընդգրկումներով, հետազոտական ծավալ-

ներով և մանրակրկիտ աշխատանքի տպավորիչ արդյունքներով Ա. Բեքարյանի աշխատությունը հանդես է գալիս որպես եզակի մի գործ հայկական բայրոնագիտության մեջ և այն հանրագումարի բերելու իր համոզիչ ապացույցներով:

Ա. Բեքարյանի աշխատության հիմքում ընկած է Բայրոնի, որպես իր դարաշրջանի և ճակատագրի պատվերով այդ դարաշրջանից էլ առաջ ընկած անհատի աշխարհընկալումը, բանաստեղծական եզակիությունը և մարդասիրական ուղղվածությունը, որ պատմական հուշ է դարձել հատակապես Բայրոն-Մխիթարյան միաբանություն առնչությունների կտրվածքով: Եվ այս իմաստով հեղինակը վերհանել է փաստական հարուստ նյութ՝ ուշադրությամբ քննելով Բայրոնի կենսագրական հանգամանքները Վենետիկում՝ 1816-1818 թթ., հայերին ու հայերեն լեզվին վերաբերող նրա նամակները՝ գրված իր բարեկամներին՝ բանաստեղծ Թ. Մուրին և հրատարակիչ Ջ. Մըրրեին, հայր Հ. Ավգերյանի հետ Բայրոնի հրատարակած անգլերեն-հայերեն ու անգլերեն-հայերեն քերականական ձեռնարկների ստեղծման պատմությունը: Այս գործերին Ա. Բեքարյանն ավելացնում է հայ մատենագրությունից Բայրոնի կատարած թարգմանությունները (հատվածներ Մովսես Խորենացու Հայոց պատմությունից, Ներսես Լամբրոնացու Ատենաբանությունից, ս. Պողոսի՝ կորնթացիներին ուղղված թղթից և այլն): Իսկ Մխիթարյան միաբանությունը և նրա գործիչները՝ Բայրոնի հետ ունեցած առնչություններով և սեփական պատմությամբ ու գործունեության վիթ-

խարի մշակութային շառավիղներով շրջանառում են խնդրո առարկա աշխատության գրեթե բոլոր և հատկապես առաջին ու երկրորդ գլուխներում: Հեղինակը աստիճանաբար վերհանում է այդ փոխհարաբերությունների բոլոր շերտերը՝ ցուցադրելով բաղադրիչների և ամբողջի լոգիստիկայի հայտնաբերման ճաշակ և հմտություն: Այդ ընթացքն ընդգրկում է Մխիթարյանների պարբերական մամուլում Բայրոնի գործերի տպագրման պատմությունից մինչև օտար հեղինակների կողմից Բայրոն-Մխիթարյան կապերի գնահատականը, Բայրոնի հայկական նամականու քննությունը, վերջինիս հիման վրա հայագիտության զարգացման ընթացքը Եվրոպայում, իր՝ Բայրոնի հայագիտական գործերի և ի վերջո, նրա անձի ու ստեղծագործության արժեքավորումը հայ գրական-հասարակական մտքի կողմից, որ հասցվում է գրեթե մինչև մեր ժամանակները: Մի հայտնի չափով քննարկվող աշխատությունը վերաբերում է նաև Մխիթարյան միաբանության և Մխիթարյան հայրերի անհատական գործունեությանը, թող որ մասնակիորեն, սակայն և տարողունակ ընդգրկումներով՝ միշտ առանցքում ունենալով Բայրոնի հետ նրանց առնչությունների մշակութային ու գիտական նշանակությունը: Հետազոտության բուն նյութը թելադրում է դրա երկու հիմնական ուղղությունները՝ հայ իրականության մեջ բայրոնագիտության սկզբնավորումն ու զարգացումը Մխիթարյանների կողմից և այնուհետև՝ Բայրոնի ստեղծագործության հոգևոր կապերը հայ գրականության հետ՝ նրա աշխարհընկալման և պատկերումների ընթացքի համեմատ: Սակայն աշխատանքը չի սպառվում նշված ուղղություններով, դրանք իմաստավորվում են նաև հետազոտական ընթացքով, կարելի է ասել՝ միջազգային ընդգրկումներով, այսինքն, բայրոնագիտության և հայագիտության ներթափանցումների մտածված վերարտադրությամբ: Ըստ այդմ, աշխատության երեք գլուխներում հեղինակը առավել խորությամբ, քան որևէ այլ ուսումնասիրող հայագիտության մեջ, իր մտահղացումներն ընդհանուր առմամբ իրականացրել է մի քանի հիմնահարցերում, որոնց մեջ կնշեինք Հայկական նամակների նշանակությունը Բայրոնին հետևող ժամանակաշրջանի հայագիտության զարգացման մեջ և հայ գրական-հասարակական մտքի ասպարեզում Բայրոնի տեղի և նշանակության հետազոտությունը:

Բայրոնի բուն իսկ կենսագրական հանգամանքներն աշխատության մեջ նախապատրաստում են նրա մուտքը Ս. Ղազար կղզի՝ ապահովելով հեղինակի կողմից անգլիացի բանաստեղծի՝ հայերին և հայերենին առնչվելու հանգամանքը և հիմնավորումների համոզչությունը: Արժե նշել նաև այս հարցում Ա. Բեքարյանի բացատրությունը. եթե Բայրոնի հայերեն սովորելու ցանկությունը մխիթարյան հայր, այս ասպարեզում նրա ուսուցիչ Հ. Ավգերյանը բացատրում էր հայ պատմիչների գործերը թարգմանելու նրա ցանկությամբ, իսկ նշանավոր պատմաբան և նույնպես նրա ժամանակակից Ղ. Ինճիճյանը՝ հայ բանաստեղծությանը ծանոթանալու նպատակով, ապա Ա. Բեքարյանը՝ այդ երկու ցանկությունները միասին, սակայն հայերենին տիրապետելու առավել հեռամետ նպատակադրմամբ: Ոչ նվազ կարևորության շարժառիթը կարելի է կարծել՝ բանաստեղծական հանճարի համար դժվարություններ հաղթահարելու

և սեփական ներաշխարհում կասկածի և ինքնավստահության պայքարի դիտարկման անհազ տենչը, ծովային խորություններից մարգարիտներ հանելու իմաստավորված տքնությունը, որտեղ եթե արկածախնդրական հովեր կան, ապա դրանք էլ մարում են հանճարի իմացական պողոթյուններում: Կարծեք, այդուհետև հասկանալի է դառնում իր՝ Բայրոնի պարզաբանումն այս հարցի լուսաբանման մեջ: Իր հայագիտական նամակներից մեկում (4 դեկտեմբերի, 1816)՝ ուղղված իր հրատարակիչ Մըրրեին, նա գրում է. «Իմ համոզմամբ հայոց լեզուն (որը երկուսն է՝ գրաբար և աշխարհաբար) դժվարին է, բայց ոչ անհաղթահարելի (համենայն դեպս, ես հուսով եմ): Կշարունակեմ ուսումնասիրությունս: Հարկավոր է միտքս մարզել ավելի խիստ ուսման բնագավառում, և այս լեզուն, ամենադժվարինը լինելով ինձ համար, նույնպիսի անհրաժեշտություն է, որպիսին՝ պոչը օձի համար» (տես գրախոսվող աշխ., էջ 180):

Իր գրքի առաջին հատվածներում Բայրոնի հայտնի կենսագրական հանգամանքներին և Մխիթարյանների հետ գործակցության փաստերին հեղինակն ավելացնում է սեփական հետազոտության արդյունքները: Այսպես, նա պարզում է, որ «Բազմավէպում» 1846 թ. անստորագիր տպագրվել է «Ուխտագնացություն Չայլդ Հարոլդի» պոեմից մի հատված, որի թարգմանիչը Ղ. Ալիշանն է: Նույնպես անստորագիր, այդ ամսագրում և ավելի ուշ շրջանում, Ղ. Ալիշանն իր այդ երախայրիքին ավելացրել է նշված պոեմի մեկ այլ հատվածի թարգմանությունը: Ա. Բեքարյանը ավելացրել է նաև նյութեր՝ նվիրված Բայրոնի հայագիտական ուսումնասիրություններին, որոնք, անշուշտ, կնպաստեն հայ-եվրոպական և իր հերթին, հայ-անգլիական մշակութային առնչությունների վերհանման գործին:

Բազմաթիվ օրինակներով Ա. Բեքարյանը ցույց է տալիս, որ Բայրոն-Մխիթարյաններ կապերը ավանդույթ և հիմք են դարձել նշված՝ մշակութային փոխհարաբերությունների բնագավառում: Մխիթարյանների գործունեությունն այս իմաստով շարունակվել է մեծ բանաստեղծի մահվանից հետո ևս:

Հայտնի է, որ Մխիթարյանների հետ գործակցության առաջին օրինակը տվել էր Բայրոնը՝ 1817 և 1819 թթ.՝ Հ. Ավգերյանի հետ հրատարակելով «Քերականութիւն անգղիական և հայերէն» և «Քերականութիւն հայերէն և անգղականերէն» ուսումնական ձեռնարկները: Այդ գործունեությունն է, ի դեպ, խթանել երկու այլ անգլիացիների՝ Ջ. Բրանդի և Է. Լոմբի աշակերտելը Հ. Ավգերյանին, որոնք ամիսներ շարունակ հայերեն են սովորել նրանից և ինչպես Բայրոնը, նպաստել հայերեն-անգլերեն (Է. Լոմբ) և անգլերեն-հայերեն բառարանների (Ջ. Բրանդ) հրատարակության աշխատանքներին: 1820-ական թթ. Վենետիկում լույս տեսած այդ բառարանները, Ա. Բեքարյանի ճշմարտացի գնահատականով, «չափազանց արժեքավոր և հրատապ են մնում առ այսօր» (էջ 25):

Մխիթարյանների հետ Բայրոնի համատեղ աշխատանքն ի հայտ է եկել նաև «Բառարան անգղիերեն և հայերէն» հրատարակության գործում (1821): Ա. Բեքարյանը վերհանում է նաև Բայրոնի զուտ ինքնուրույն գործերը՝ դարձյալ նշված գործակցության շրջանակներում (հայերեն Աստվածաշնչի այն հատվածների

թարգմանությունները, որոնք չկային անգլերեն տարբերակում, հատվածներ հորենացու «Հայոց պատմությունից» և Լամբրոնացու «Ատենաբանությունից»):

Աշխատության մեջ առանձնակի ուշադրություն է դարձված Բայրոնի և Մխիթարյանների ու հայագիտության հետ այն աղբյուրների վերհանմանը, որոնք շոշափվում են բանաստեղծի նամականիում՝ ուղղված իր բարեկամներին ու իր շրջապատի այլ մարդկանց: Փաստական պատկառելի նյութի հիման վրա հեղինակը հաջողությամբ ներկայացրել է անգլիական դասականի հայեցվածքը Մխիթարյանների անձնվեր գործունեության նկատմամբ և հարգանքի ու հոգածության դրսևորումները՝ ի նպաստ միաբանության լուսավորական ծրագրերի:

Աշխատությունն աչքի է ընկնում հստակ արտահայտված ուղղություններով, որոնց մեջ կարելի է առանձնացնել Մխիթարյանների գործունեության լրջմիտ իմաստավորման, Եվրոպայում հայագիտության զարգացման հետագա ընթացքի վրա Բայրոնի ներգործության (երբեմն, թվում է, ուսումնասիրության շրջանակները գերազանցող մանրամասներով) և վերջապես, հայ-անգլիական մշակութային կապերի հիմնահարցերը՝ այս դեպքում ծանրության կենտրոնում պահելով հայ գրական-հասարակական մտքի վրա Բայրոնի թողած ազդեցությունը: Ընդամին, հեղինակը մանրամասն է անդրադարձել Բայրոնի պոեզիայի թարգմանությունների խնդրին, որոնք ընդգրկում են ինչպես նրա առանձին կամ մասնակի գործերի, այնպես էլ ժողովածուների հրատարակությունները:

Բայրոնի գործերի հայերեն թարգմանությունների ասպարեզում Բեքարյանն ընդգծել է Մխիթարյանների և նրանց պարբերականների, մանավանդ «Բազմավեպի» բացառիկ դերը: Նա արժանին է հատուցում նրա առաջին թարգմանիչներին՝ Ղ. Ալիշանին ու Խ. Գալֆայանին: Այստեղ և շարադրանքի հետագա հատվածներում հեղինակը կատարել է գիտական մտահղացման լայն ասպարեզ ենթադրող աշխատանք՝ «Բայրոնը հայ գրականության մեջ» թեմայով: Միշտ կամ գրեթե միշտ նա Բայրոնի գործերի հայերեն թարգմանության պատմությունն առնչում է հայ իրականության մեջ հասունացած գեղագիտական խնդիրներին և այս կտրվածքով մեկնաբանում և Բայրոնի ստեղծագործության ոգին, և հայ ընթերցողի անհատական ու հասարակական մղումները:

Աշխատության I և II գլուխների միջև թեմայի վերլուծության և այն ժամանակային ամբողջականության մեջ գնահատելու տեսակետից կա աչքի զարնող մի ընդհանրություն, որով հիմնահարցի քննությունը ստանում է միջազգային նշանակություն: Նկատի ունենք օտար հեղինակների վերաբերմունքը Բայրոնի և Մխիթարյանների կապերի նկատմամբ: Այդ կապերի մասին գրող հեղինակների միջազգային աշխարհագրությունը գրքում նկարագրվում է իր պատկառելի սահմաններով՝ անգլիացիներից (Ջոն Ջեֆրսոն, Իրվինգ Ուոլես, Ջեն Մորիս) մինչև ռուս հեղինակներ (Ա. և Յու. Վեսելովսկիներ), ֆրանսիացիներ, ամերիկացիներ, իտալացիներ (Իրվինգ, Ուոլես, Լեսլի Մարշանդ, Ա. Պաուլ դի Դեզիո և այլն): Հարկ է ընդգծել հեղինակի բժախնդրությունը՝ հանգամանորեն նշելու մամուլում և տարբեր հրատարակություններում արտացոլված այս թեմաներն առանձնացնելիս: Նա հատկապես վերհանում է «Բազմավեպի» ցուցաբերած

բացառիկ ուշադիր և զգայուն վերաբերմունքը Բայրոն-Մխիթարյաններ փոխհարաբերությունների բացահայտման տեսակետից: Այստեղ առանձնացված է «Բազմավէպի» 1924 թ. թողարկումը՝ նվիրված բանաստեղծի մահվան 100-ամյակին, որում նյութերը մեծավ մասամբ տպագրված են հայերեն և անգլերեն լեզուներով: Օտարազգի գրողների, մտավորականների և պարզապես Վենետիկ՝ Ս. Ղազար այցելող մարդկանց կարծիքները նշված փոխառնչությունների վերաբերյալ՝ իմացական նոր շերտեր են բացահայտում Բայրոնի՝ հայ իրականության հետ ունեցած շփումների լուսաբանման գործում: Եվ այս տեսակետից խնդրին նայելիս դրանք թարմ բովանդակավորում են ձեռք բերում Մխիթարյանների մյուս՝ «Հանդես ամսօրեայ» ամսագրում: Այստեղ հեղինակն անդրադառնում է Զ. Օ'Բրայենի մի հոդվածին (տպագրված այդ հանդեսի դեսի 1866 թ. համարներում)՝ «Լորդ Բայրոն, Ֆրիդրիխ Շիլլեր և խորհրդավոր հայը» վերնագրով: Անգլիացի հեղինակը Շիլլերի երկի հերոսի նկատմամբ ունեցած ռոմանտիկական-միստիկական հետաքրքրությամբ է բացատրում նրա հայերեն սովորելու և Մխիթարյաններին առնչվելու ամենակին էլ ոչ պատահական հանգամանքը: Նույնպիսի բովանդակության՝ Մխիթարյանների «Հայ ընտանիք» հանդեսի հոբելյանական նյութերում ևս (1874, թիվ 11-12)՝ ամբողջովին նվիրված Բայրոնի մահվան 150-ամյակին, Ա. Բեքարյանը հաջողությամբ ցուցադրում է, որ Բայրոնի ստեղծագործության և կենսագրության հետազոտության շարունակական ընթացքը անհրաժեշտորեն պետք է ենթադրեր նրա և Մխիթարյանների շփումների հոգևոր-բարոյական անբեկանելի կապը, որի փոխադարձ բնույթն իր հերթին նպաստել է Մխիթարյան միաբանության համբավի տարածմանը Եվրոպայում, Ամերիկայում և այլուր՝ լուրջ ազդակ դառնալով հայագիտության զարգացման համար: Վերոհիշյալ և այլ հեղինակների գործերը Ա. Բեքարյանը քննում և արժեքավորում է տարբեր տեսանկյուններից, նորովի և տալով յուրաքանչյուրի առանձին գիահատականը:

Աշխատության երկրորդ գլուխը նվիրված է Եվրոպայում հայագիտության ձևավորման և զարգացման պատմությանը՝ հիմքում ունենալով Բայրոնի հայկական նամականին և նրա հայագիտական ուսումնասիրությունները: Այս պատմական ակնարկում շրջանառում և բնութագրվում են եվրոպացի հեղինակներ Շրյոդերը, Լա Կրոզը, Վիստոն եղբայրները (XVII-XVIII դդ.), Փարիզի Արևելյան կենդանի լեզուների դպրոցը (XIX դ. սկզբներ), Սեն-Մարտենը, «Ասիական ընկերության» հայագիտական հետաքրքրությունները և այլն: Սրան սերտաճած՝ հեղինակը գնահատում է Բայրոնի տեղն ու նշանակությունը այս ասպարեզում: Այստեղ նա վերջինիս հայագիտական գործունեությունը բացատրում է նաև իր՝ Բայրոնի հայտնի ասույթով, որի մեջ մարդկային բովանդակությունը շատ ավելի խորն է, քան հայերին տրված որևէ այլ բնութագիր՝ որևէ այլ օտար հեղինակի կողմից և անգերազանցելի՝ իր պարզությամբ և անկեղծությամբ, որտեղ հայերին նա համարում է այնպիսի տարագրություն ունեցող ազգ, որը «Թերևս դժվար լինի գտնել մի ազգի տարեգրություն, որն ավելի զերծ լինի արատավորող ոճիրներից, քան հայերինը, որոնց առաքինու-

թյունները խաղաղասիրության արգասիք են, իսկ արատները՝ բռնադատման հետևանք: Սակայն ինչպիսին էլ լինեն նրանց ճակատագիրը... նրանց երկիրը հավետ պիտի մնա աշխարհի ամենահետաքրքիր երկրներից մեկը, և թերևս նրանց լեզուն միայն ավելի խորը ուսումնասիրության պահանջ է դնում՝ ավելի գրավիչ դառնալու համար» (էջ 16):

Այստեղ երկու հանգամանք է աչքի զարնում, նախ, շատ ամփոփ, հայոց պատմության փիլիսոփայությունը (որը ցայսօր չի ուսումնասիրվել հարկ եղած խորությամբ) և ապա Բայրոնի հորդորը եվրոպական գիտությանը՝ զբաղվելու հայագիտությամբ, որպես համամարդկային արժեքներ վերհանող գործոնի: Այս հանգամանքով էլ պայմանավորված են, կարծում ենք, այս աշխատության իրողությունները՝ Բայրոնի ժամանակակից եվրոպական հայագիտության նկարագիրը և դրա զարգացման մեջ Բայրոնի անհատականության նշանակությունը:

Շատ ուշագրավ է, որ ռոմանտիզմի ռահվիրան միանգամայն իրատեսական հիմնավորում է տալիս Հայաստանի թշվառությունների պատճառին. «քանզի երկար ժամանակ հզոր թագավորություն լինելով հանդերձ, համարյա երբեք անկախ, չեղավ և պարսից սատրապները, և թուրք փաշաները նմանաբար անապատ դարձրին այն երկիրը, ուր աստված մարդուն ստեղծել էր իր իսկ պատկերով» (էջ 116-117):

Այնուհետև, երկրորդը՝ Ա. Բեքարյանը բավական նրբամտորեն է մեկնաբանում մեր մեջբերած հատվածի վերջին մասը. «Ելնելով քաղաքական նկատառումներից, – գրում է նա, – Մխիթարյանները որոշեցին չիրատարակել ներածությունը: Բանաստեղծի խոսվարարական խառնվածքը չցանկանալով դույզն-ինչ զիջումների դիմել, չընդունեց այդ օբյեկտիվ պատճառները: Բանաստեղծը վիրավորվեց և դադարեց Մխիթարյաններին այցելելուց» (էջ 117):

Հիրավի, սատրապներն ու փաշաները շարունակում էին իրենց գործը՝ զգացնել տալով փոխհարաբերությունների այս անձկալի, բայց և խորհրդանշական պատկերի մեջ: Ավելացնենք, որ հեղինակի հետագա շարադրանքից պարզ է դառնում, որ նշված պատճառով Բայրոնի առաջաբանը մի տևական ժամանակ անտիպ էր մնում և որ բանաստեղծի մահվանից վեց տարի անց միայն, 1830 թ., Թ. Մուրն այն հրատարակեց «Լորդ Բայրոնի նամակները և օրագրերը. կենսագրական բնույթի տվյալներով հանդերձ» գրքում: Հայերեն թարգմանությամբ Մխիթարյաններն այն տպագրեցին 1852 թ. և հետագայում:

Աշխատության վերջին գլխում հեղինակն իր մտահղացման համեմատ, որ հետամտում է Բայրոնը և հայ իրականությունը հիմնահարցի լուծումը, անցնում է նրա մասին հայ գրական-հասարակական մտքի անդրադարձներին՝ թեման եզրավորելով հայ գրականության մեջ բայրոնիզմի դրսևորումներով: Արժե ընդգծել հայ մտավորականության՝ Բայրոնի ստեղծագործության հետ ունեցած ընդհանրությունների վերհանումը գրքում՝ հայությանը հատուկ ընդարձակ աշխարհագրությամբ (Եվրոպայի և Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներ, ԱՄՆ, Ռուսաստան), անգլիացի հանճարի, նրա ժամանակի ու միջավայրի վերաբերյալ այդ մտավորականության անառարկելի իրազեկությունը: Վիճակագրական

ամուր հենքի վրա հեղինակը ցույց է տալիս Բայրոնի՝ բազմիցս հայերենի թարգմանվելու պատմահասարակական պատճառները, որոնց մեջ առաջնակարգ նշանակություն է տալիս ճշմարտության և արդարության որոնումներին: Այս հոգևոր ընդհանրությունն է, որ հայ գրականության մեջ Բայրոնին վերապահել է բացառիկ տեղ. Ոչ միայն նրա ստեղծագործություններն են թարգմանվել, այլև ինքը՝ բանաստեղծն է քանիցս դարձել այդ գրականության հերոս (Ս. Շահագիզ, Հովհ. Թումանյան, Ռ. Որբերյան, Վ. Թորգոմյան, Ա. Սրապյան, Ե. Փեճիկյան, Ն. Զարյան, Ա. Պարսամյան և ուրիշներ): Հեղինակն այստեղ կատարել է գրականագիտական բարձրորակ աշխատանք՝ վերհանելով հայ հեղինակների յուրովի մոտեցումները Բայրոնի կերպարի անհատականացման հայտաբերումներով: Այս բնագավառում հայ գրականությունը սնուցվել է պարբերական հրատարակությունների մատուցած պատկառելի նյութով, որ և հիմնավորվում է հայ գրականության մեջ Բայրոնի ֆենոմենի տրամաբանությանը նպաստ բերած «Բազմավեպի», «Ծաղիկի», «Մեղվի», «Մշակի», «Հանդես ամսօրեայի», «Հայ ընտանիքի» ավանդը խնդրո առարկա հիմնահարցում:

Քննարկվող գրքում հատկապես պետք է արժեքավորել հանրագումարային նշանակության վերջին հատվածը՝ «Բայրոնիզմի արտացոլումը հայ գրականության մեջ» խորագրով: Բայրոնիզմի՝ ռոմանտիկական գաղափարների ու բանաստեղծական աշխարհի անկրկնելի համադրումը գրականության մեջ՝ իր խոր հետքն է թողել հայ գրականության վրա Ղ. Ալիշանից և Ս. Շահագիզից մինչև Ռ. Որբերյան, Հովհ. Թումանյանից և Ավ. Իսահակյանից մինչև Վ. Կարենց, Պ. Սևակ և մեր ժամանակների այլ գրողներ: Բայրոնիզմին ներհատուկ անհագ ազատասիրությունը, մարդասիրությունը և այլասիրությունը տառապած անհատի և ազգերի նկատմամբ՝ պայմանավորեցին հայ գրողների ու գրականության՝ այլև կերպարվեստում ամբողջական ժանրերի (քաղաքական և քաղաքացիական քնարերգություններ, սուրբեկտիվ քնարերգություն) արդիականացումն ու այլ զարգացումները: Պետք է ավելացնել Բայրոնի թողած անխուսափելի ազդեցությունը հայ ազգային ազատագրական մտայնության, հոգևոր ու մտավոր կապանքներից ձերբազատվելու այն ուղղվածության վրա, որով հայ գրականությունը մերձենում է ազգերի մշակույթին ընդհանրապես և մասնավորապես՝ Բայրոնի ստեղծագործության լայնահուն ուղիներով:

Կարելի էր ավելի երկար խոսել աշխատության արժանիքների և այլ առանձնահատկությունների վերաբերյալ, սակայն եզրափակելուց առաջ չշրջանցենք դրա բովանդակային մի իրողությունը. գիրքը հայերենից ռուսերենի է թարգմանել Գայանե Հարությունյանը՝ իրեն հատուկ լեզվագիտական և հայագիտական իմացությամբ ու հմտությամբ: Ավելացնենք նաև նրա աշխատանքի հույժ տպավորիչ գեղարվեստական կողմը՝ Բայրոնին նվիրված չափաժողովածական թարգմանությունները արևմտահայ (սփյուռքահայ) պոեզիայից ռուսերենի (Ռ. Որբերյան, Ե. Փեճիկյան, Վ. Թորգոմյան, Ա. Սրապյան, Մ. Աթմաճյան), որոնք կատարվում են առաջին անգամ:

Ցանկալի կլինեն առավել բազմակողմանի և ընդլայնված տեսնել Հավելվածի փաստական նյութը՝ տարբեր ժամանակներում, նրա հայերեն հրատարակությունների տիտղոսաթերթերը:

Պետք է շնորհավորել հեղինակին, նաև ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտին՝ Բայրոնի ստեղծագործությանը նվիրված տասնամյակների այս անդուլ աշխատանքը հաջողությամբ ամբողջացնելով հայ բայրոնագիտությանը մնայուն արգասիք ընծայելու և գրքի հրատարակության համար: Այս առթիվ կարելի է ասել, որ անգամ այս լուրջ աշխատանքի դեպքում անխուսափելի են մնացել որոշ վիճելի խնդիրներ (կրկնությունների հիմնավորվածությունը), թեմատիկ ձևակերպման հետ կապվող հանգուցալուծումներ (կառուցվածքային տրոհումներ), որպիսիք կարող են միայն սրել ընթերցողի ուշադրությունը սիրով և նվիրումով կատարված այս աշխատանքի անհերքելի արժեքի նկատմամբ:

ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ